ԼԻՆԵՆՔ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԻՐԱՁԵԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Kingdom of the Netherlands

PINK ARMENIA

Սկիզբ ուղեցույցում ներկայացված են ՀՀ քրեակատարողական ոլորտում գործող օրենսդրության և ընթացակարգերի այն հոդվածները, որոնք առնչվում են կալանավորված անչափահաս ու դատապարտյալների իրավունքներին, պարտականություններին, առողջության հարցերին: Սկզբ նպատակ ունի բարձրացնելու պարզ կրող անչափահաս իրավախախտությունը քրեակատարողական օրենսդրության վերաբերյալ:

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ցանկացած ոլորտ, առավել ևս իրավունքի ճյուղ ունի որոշակի հիմնարար ելակետային դրույթներ՝ սկզբունքներ, որոնք ազդում են իրավունքի հետ առնչվող բոլոր անձանց վրա: «ՀՀ քրեակատարողական օրենսգրքի» (այսուհետ՝ ՔԿՕ) համաձայն այդ սկզբունքներն են՝

1) Հոդված 5. Մարդասիրության սկզբունքը - Պատիժների կատարումը և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառումը չպետք է զուգակցվեն անձի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնությամբ, ինչպես նաև այնպիսի գործողություններով, որոնք կարող են հանգեցնել անձի զարգացման հետընթաց առաջացնող սոցիալ-հոգեբանական փոփոխությունների:

2) Հոդված 6. Օրենքի առջև դատապարտյալների հավասարության և խտրականության արգելքի սկզբունքը - Բոլոր դատապարտյալները հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով: Պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները տարածվում են բոլոր դատապարտյալների վրա՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգա-

յին փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

3) Հոդված 7. Պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման սկզբունքը

4) Հոդված 8. Դատապարտյալի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման հիմնական միջոցների կիրառման համարժեքության և պիտանիության սկզբունքը

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Այդ սկզբունքներն առաջնային են դատապարտյալի իրավունքների և ազատությունների ապահովման համար, և երաշխավորում են պարտականությունները կատարելիս չարաշահումներից զերծ մնալը: ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալն իրավունք ունի[1]՝

1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով գրավոր և բա-

[1] Նշված իրավունքներն ունեն նաև ձերբակալված և կալանավորված անձինք, ինչը նախատեսված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 13-րդ հոդվածում, իսկ պարտականությունները նշված են նույն օրենքի 14-րդ հոդվածում:

նավոր ***տեղեկություններ ստանալու*** իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, պատժի կատարման կարգի և պայմանների, դիմումներ և բողոքներ ներկայացնելու կարգի մասին, ինչպես նաև իր վերաբերյալ մշակված տեղեկության մասին, բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տվյալների.

2) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի աշխատակիցների կողմից իր նկատմամբ ***հարգալից վերաբերմունքի***.

3) ***իր անվամբ և ազգանվամբ կոչվելու***.

4) ***մտքի, խղճի և կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության***: Այս իրավունքն իրականացվում է՝ չխախտելով պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի ներքին կանոնակարգը, ինչպես նաև չսահմանափակելով այլ անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները.

5) ***առողջության պահպանման***, այդ թվում՝ ստանալու առողջության համար բավարար սննդային արժեք ունեցող սննդամթերք, բժշկական օգնություն (առաջնային, մասնագիտացված, շտապ և անհետաձգելի), հոգեբանական կամ հոգեթերապևտիկ օգնություն, ինչպես նաև դատապարտյալի ցանկությամբ իր դրամական միջոցների հաշվին զննվելու իր ընտրած բժշկի կողմից.

6) ***հանգստի,*** այդ թվում՝ բացօթյա զբոսանքի, մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի.

7) ***անվտանգության ապահովման***: Դատապարտյալը բացառիկ դեպքերում կարող է պահվել առանձնացված՝ պաշտպանական նպատակով՝ իր, իսկ կանխարգելիչ նպատակով՝ այլ անձանց կամ ՔԿՀ-ի անվտանգությանն ու ապահովությանն սպառնացող վտանգի դեպքում.

8) ***արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու***, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ (տեսազանգեր), օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և

զանգվածային լրատվության միջոցներից.

9) ***սոցիալական ապահովության***, այդ թվում՝ ընդհանուր հիմունքներով, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կենսաթոշակներ և պետական նպաստներ ստանալու.

10) ***իրավաբանական օգնություն ստանալու***.

11) ***օրենքով նախատեսված կրթություն ստանալու***.

12) ***քաղաքացիաիրավական գործարքների մասնակցելու***.

13) ***նույնականացման քարտ ստանալու***՝ «Նույնականացման քարտերի մասին» օրենքով սահմանված կարգով.

14) ***դրամական փոխանցումներ, հանձնուքներ և ծանրոցներ ստանալու և ուղարկելու***.

15) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի աշխատակիցների միջոցով ***սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու***.

16) ***անձնական ընդունելության խնդրանքով*** պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի ղեկավարին, այդ հիմնարկի կամ մարմնի գործունեության նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմիններ ***դիմելու***.

17) ***իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով*** ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով պատիժ կատարող հիմնարկ կամ մարմին, նրանց վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ և կուսակցություններ, լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես

նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ ***դիմելու***: *Դատապարտյալի դիմումները և բողոքները գրաքննության ենթակա չեն:*

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՔԿՕ-ի 11-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալը պարտավոր է՝

1) կատարել և պահպանել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված քաղաքացիների պարտականությունները.

2) կատարել և պահպանել պատժի կրման կարգն ու պայմանները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները.

3) կատարել պատիժ կատարող հիմնարկի և մարմնի աշխատակիցների օրինական պահանջները.

4) հարգալից վերաբերմունք դրսևորել պատիժ կատարող հիմնարկի և մարմնի աշխատակիցների, այդ հիմնարկ և մարմին այցելող անձանց, ինչպես նաև այլ դատապարտյալների նկատմամբ.

5) ներկայանալ պատիժ կատարող հիմնարկի ու մարմնի վարչակազմի կանչով.

6) տալ բացատրություններ պատժի կատարման կարգի պահանջները խախտելու վերաբերյալ.
7) պահպանել անձնական և ընդհանուր հիգիենայի կանոնները.
8) խնամքով վերաբերվել պատիժ կատարող հիմնարկի և մարմնի գույքին:

Դատապարտյալի իրավունքների և պարտականությունների ցանկը սպառիչ չէ և նրան կարող են վերապահվել օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ[2]:

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐ

Ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալը պատիժը կրում է քրեակատարողական հիմնարկում (այսուհետ՝ ՔԿՀ), որոնք բաղկացած են

[2] Օտարերկրյա քաղաքացի դատապարտյալն իրավունք ունի կապեր հաստատելու և պահպանելու Հայաստանի Հանրապետությունում իր պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի հետ: Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ չունեցող պետության քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած դատապարտյալներն իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու համապատասխանաբար իրենց կամ այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի հետ, որն ստանձնել է այդ անձանց շահերի պաշտպանությունը, կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ:

1-3 անվտանգային գոտիներից: Ըստ անվտանգության աստիճանի՝ չափահաս դատապարտյալների համար ազատազրկում և ցմահ ազատազրկում կատարող ՔԿՀ-ներում անվտանգային գոտիների տեսակներն են.

1) ցածր անվտանգային գոտի.

2) միջին անվտանգային գոտի.

3) բարձր անվտանգային գոտի[3]:

ՔԿՀ-ը և համապատասխան անվտանգային գոտին որոշում է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովը (այսուհետ՝ Տեղաբաշխման հանձնաժողով), որն առաջնորդվում է ՀՀ ՔԿՕ-ի 58-րդ, 59-րդ և 64-րդ հոդվածներով: Այսպես, Տեղաբաշխման հանձնաժողովը ՔԿՀ-ը որոշելիս ընտրում է դատապարտյալի նախկին մշտական կամ մերձավոր ազգականների բնակության վայրին հնարավորինս մոտ գտնվող ՔԿՀ, եթե նման տեղաբաշխումը չի խոչընդոտում անվտանգության ապահովման կամ դատապարտյալների համատեղելիության պահանջները:

ՀՀ ՔԿՕ-ի 59-րդ հոդվածի համաձայն՝

1) ցածր անվտանգային գոտում պատիժ են կրում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած դատապարտյալները,

---

[3] Անչափահաս դատապարտյալները պատիժ են կրում անչափահաս դատապարտյալների համար նախատեսված ՔԿՀ-ում, որտեղ նրանց համար նախատեսվում են պատժի կրման հատուկ վերականգնողական պայմաններ, որոնք ուղղված են անչափահաս դատապարտյալի ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումն ապահովելուն, նրան դաստիարակելուն և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանելուն:

2) միջին անվտանգային գոտում պատիժ են կրում ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած և 10 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում չկրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում,

3) բարձր անվտանգային գոտում պատիժ են կրում 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում կրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում:

Ընդ որում, միմյանցից անջատ են պահվում՝

1) տղամարդիկ՝ կանանցից.

2) անչափահասները՝ չափահասներից[4].

3) բարձր ռիսկայնություն ունեցող դատապարտյալները, որոնց անձնական հատկանիշները, քրեական ազդեցությունը, հանցագործության շարժառիթը, պատիժ կատարող մարմնում կամ հիմնարկում անօրինական գործողությունների կամ վարքագծի հետևանքները լուրջ սպառնալիք են ներկայացնում ՔԿՀ-ի, մյուս դատապարտյալների կամ այլ անձանց անվտանգությանն ու ապահովությանը՝ մյուս դատապարտյալներից.

4) դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին

[4] Բացառություն է կազմում հետևյալ դեպքի՝ 18 տարին լրացած ազատազրկման դատապարտված անձը, որպես կանոն, թողնվում է անչափահասների ՔԿՀ-ի անվտանգային գոտու խիստ պայմաններում, սակայն մինչև նրա 21 տարին լրանալը: 18 տարին լրացած դատապարտյալներին անչափահասների համար նախատեսված ՔԿՀ-ի անվտանգային գոտու խիստ պայմաններում թողնելիս նրանք պահվում են անչափահաս դատապարտյալներից անջատ, եթե համատեղ պահելը չի բխում նույն գոտում պատիժ կրող անչափահասների լավագույն շահից:

աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության ավագ ենթասպայական և սպայական կազմերի զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալները՝ մյուս դատապարտյալներից.

5) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություն ունեցող դատապարտյալը՝ մյուս դատապարտյալներից.

6) օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ մյուս դատապարտյալներից:

Կոնկրետ անվտանգային գոտում պատիժ կրելը ստատիկ իրավիճակ չէ, և անվտանգային գոտին կարող է փոխվել ՀՀ ՔԿՕ-ի 69-րդ հոդվածի համաձայն՝ փուլային եղանակով Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի եզրակացության հիման վրա, եթե դատապարտյալը դրսևորել է **դրական վարքագիծ**:

Այսպես, դատապարտյալը կարող է տեղափոխվել՝

1) ցածր անվտանգային գոտի, եթե՝

- ✔ դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար մինչև 10 տարի ժամկետով ազատազրկման կամ նախկինում չի կրել ազատազրկում՝ ռեցիդիվի դեպքում, և պատիժը կրում է միջին անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն կեսը կրելուց հետո,
- ✔ դատապարտվել է 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման կամ նախկինում կրել է ազատազրկում՝ ռեցիդիվի դեպքում, և պատիժը կրում է միջին անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն երկու երրորդը կրելուց հետո,

- ✔ դատապարտվել է ցմահ ազատազրկման և պատիժը կրում է միջին անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն 20 տարին կրելուց հետո.

2) միջին անվտանգային գոտի, եթե՝

- ✔ դատապարտվել է 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման կամ նախկինում ազատազրկում է կրել՝ ռեցիդիվի դեպքում, և պատիժը կրում է բարձր անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն մեկ քառորդը կրելուց հետո,
- ✔ դատապարտվել է ցմահ ազատազրկման և պատիժը կրում է բարձր անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն 15 տարին կրելուց հետո:

Օրենքը թույլ է տալիս նաև, որ պատժի կատարման համար անվտանգային գոտու տեսակը կարող է փոխվել դեպի անվտանգային ավելի բարձր աստիճան՝ ցանկացած ժամանակ՝ հիմք ընդունելով: Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի եզրակացությունը դատապարտյալի դրսևորած **բացասական վարքագծի վերաբերյալ կամ վերջինիս գրավոր դիմումը**[5]: Տեղաբաշխման հանձնաժողովը հարցը քննարկում է դատապարտյալի դիմումի հիման վրա ՔԿՀ-ի վարչակազմի ներկայացրած միջնորդագիրը ստանալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում: Բացառիկ դեպքերում այդ ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով, եթե անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ուսումնասիրություն այնպիսի հանգամանքների վերաբերյալ, որոնք անմիջականորեն կարող են ազդել քննարկման արդյունքի վրա:

Եթե պատժի կատարման համար անվտանգային գոտու տեսակը փոխվել է անվտանգության

[5] Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կատարելու համար անվտանգային գոտու տեսակը չի կարող փոխվել բարձր անվտանգային գոտու, բացառությամբ ռեցիդիվի դեպքում:

ավելի ցածր աստիճանի, ապա փոխվելուց հետո անվտանգային գոտու տեսակն անվտանգության ավելի ցածր աստիճանի անվտանգային գոտիով փոխելու հարցը կարող է Տեղաբաշխման հանձնաժողովը կրկին քննարկել տվյալ անվտանգային գոտու տեսակում պատիժն առնվազն 1 տարի կրելուց հետո, իսկ եթե պատժի մնացած մասը պակաս է մեկ տարուց, ապա՝ պատժի մնացած մասի կեսը կրելուց հետո:

Եթե դատապարտյալն իր դրսևորած բացասական վարքագծի հիման վրա տեղափոխվել է անվտանգության ավելի բարձր աստիճանի անվտանգային գոտի, ապա անվտանգության ավելի ցածր աստիճանի յուրաքանչյուր հաջորդ անվտանգային գոտի դատապարտյալի տեղափոխման հարցը կարող է քննարկվել ավելի բարձր աստիճանի անվտանգային գոտի տեղափոխման ժամկետի կեսը կրելուց հետո:

Տեղաբաշխման հանձնաժողովի կողմից անվտանգային գոտու տեսակն անվտանգության ավելի ցածր աստիճանի փոխելու վերաբերյալ ՔԿՀ-ի միջնորդագիրը մերժելու մասին որոշում կայացված լինելու դեպքում Տեղաբաշխման հանձնաժողովի քննարկմանը նոր միջնորդագիր կարող է ներկայացվել առնվազն 3 ամիս հետո:

Անվտանգային տարբեր գոտիներում պատժի կատարման առանձնահատկությունները ներկայացված են **աղյուսակով:**

Քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտիների և դրանց պայմանների համեմատական աղյուսակ

Անվտան գային գոտու տեսակը	Պայման-ներ	Հիմքը	Պահման վայր	Դատապար-տյալների թիվ	Ծախսվող հնարավոր գումար ՀՀ դրամ	Տեսակ-ցություն		Տեղաշարժ[6]
						Երկարատև	Կարճատև	
Ցածր	Մեղմ	Ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտումը	Բնակելի կացարան	10	75.000	12[7]	12	Գիշերային ժամերին՝ ՔԿՀ-ի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում, իսկ ցերեկային ժամերին՝ ՔԿՀ-ի տարածքի սահմաններում, և ՔԿՀ-ի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս

[6] Այլ առանձնահատկություններից է այն, որ տարին մինչև 5 օր տևողությամբ, 1 երկարատև տեսակցություն կարող են ունենալ դատապարտյալները՝ ՔԿՀ-ի սահմաններից դուրս բնակվելով, ինչպես նաև արգելած առարկաների և իրերի առնչությամբ առկա են բացառություններ:

[7] Նաև տարվա ընթացքում թույլատրվում է ունենալ առնվազն մեկ՝ մինչև 5 օր տևողությամբ, երկարատև տեսակցություն՝ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս բնակվելու իրավունքով:

	Խիստ	Միջին ծանրության հանցագործության համար դատապարտումը	Բնակելի կացարան	8	70.000	10	10	ցերեկային ժամերին՝ ՔԿՀ-ի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում
Միջին	Մեղմ	Ծանր հանցագործության համար դատապարտումը	Բնակելի կացարան	8	70.000	8	8	ցերեկային ժամերին ՔԿՀ-ի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում
	Խիստ	Առանձնապես ծանր մինչև 10 տարի ժամկետով դատապարտումը և նախկինում ազատազրկում չկրած դատապարտյալ լինելը՝ ռեցիդիվի դեպքում	Խուց	8	65.000	6	6	առնվազն 3 ժամ ցերեկային որոշակի ժամերի ՔԿՀ-ի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում

Բարձր	Մեղմ	10 տարուց ավել ժամկետով դատապարտվելը	Խուց	8	65.000	6	6	2 ժամ տևողությամբ զբոսանք
	Խիստ	Ցմահ ազատազրկման դատապարտվելը և նախկինում ազատազրկում կրած լինելը՝ ռեցիդիվի դեպքում	Խուց	4	60.000	4	4	1 ժամ տևողությամբ զբոսանք
Անչա-փա-հասներ	Մեղմ	Առաջին անգամ ազատազրկման դատապարտվելը	Բնակելի կացարան	8	70.000	12	12	Ցերեկային ժամերին տեղաշարժվել ՔԿՀ-ի տարածքի սահմաններում, ինչպես նաև ՔԿՀ-ի պետի թույլտվությամբ՝ ՔԿՀ-ի տարածքից դուրս
	Խիստ	Նախկինում ազատազրկում կրելը և դատվածություն ունենալը	Բնակելի կացարան[3]	6	65.000	8	8	Ցերեկային ժամերին՝ ՔԿՀ-ի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Դատապարտյալը ՔԿՀ կամ մեկ ՔԿՀ-ից մեկ այլ ՔԿՀ է տեղափոխվում պահակախմբով՝ պետության միջոցների հաշվին: Դատապարտյալը տեղափոխվում է բավարար լուսավորություն և օդափոխություն ունեցող, իրեն ավելորդ ֆիզիկական անհարմարություն պատճառելը բացառող փոխադրամիջոցով, անհրաժեշտության դեպքում՝ բժշկական հսկողությամբ: Տեղափոխման ընթացքում դատապարտյալը պետք է ապահովված լինի համապատասխան նյութակենցաղային և սանիտարահիգիենիկ պայմաններով, ինչպես նաև հնարավորինս պաշտպանված լինի հասարակական հետաքրքրասիրությունից:

ՔԿՀ ընդունված կամ տեղափոխված կալանավորված անձը մինչև 7 օր տևողությամբ, իսկ դատապարտյալը մինչև 15 օր տևողությամբ տեղավորվում է կարանտինային բաժանմունքում հետևյալ նպատակներով՝

1) նախնական բժշկական զննություն անցնելու,
2) ՔԿՀ-ի պայմաններին հարմարվելու,
3) ՔԿՀ-ի ներքին կանոնակարգով նախատեսված կալանք խափանման միջոցի կամ պատժի կատարման կարգին և պայմաններին իրազեկվելու,

4) ինքնասպանության և ինքնավնասման ռիսկը վեր հանելու և գնահատելու,
5) ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա կալանք խափանման միջոցի կամ պատժի կատարման անհատական պլանավորման և պայմանները որոշելու:

Եթե ՔԿՀ կալանավորված անձին կամ դատապարտյալին ընդունելու պահին հոգեկան առողջության զննության և ռիսկի գնահատում չի իրականացվել՝ նրա հրաժարման կամ ՔԿՀ ընդունելու պահին համապատասխան մասնագետի բացակայության հիմքով, ապա այն իրականացվում է կարանտինային բաժանմունքում՝ ընդունումից 24 ժամվա ընթացքում: Եթե կալանավորված անձը կամ դատապարտյալը հրաժարվում է այդ գնահատումից, ապա այն կրկին առաջարկվում է կալանավորված անձին կամ դատապարտյալին ընդունումից 24 ժամվա ընթացքում: Չգալի ռիսկայինության դեպքում հրավիրվում է հոգեբույժ:

ՔԿՀ տեղափոխվելուց անմիջապես հետո իրականացվում է գրանցում համապատասխան մատյաններում և անհատական քարտում:

Յուրաքանչյուրի համար վարվում է անձնական գործ, որը պետք է ներառի դատապարտյալի (կալանավորվածի) անձին և պատժի (կալանքի) կատարմանը վերաբերող պարբերաբար թարմացվող տեղեկություններ, այդ թվում՝ նախկինում կիրառված խափանման միջոցի մասին, ինչպես նաև ՔԿՀ ընդունելու և պատժից ազատելու ամսաթվերը:



ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՆՆՈՒՄ

ՔԿՀ-ից փախուստները, ինքնավնասումները, ինքնասպանությունները, պատժի կատարման կարգի խախտումները, անկարգությունները, հանցանքները կամ այլ իրավախախտումներ կանխելու կամ խափանելու նպատակով դատապարտյալը կարող է ենթարկվել զննման, անձնական խուզար- կության, նրա իրերը՝ զննման, իսկ ՔԿՀ-ում նրա կացարանը, մեկուսացված խուցը կամ նրա գտնվելու այլ վայրը՝ խուզարկության:

ՔԿՀ մուտք գործելու, ՔԿՀ-ից դուրս գալու, խցից կամ կացարանից մեկ այլ խուց կամ կացարան կամ բժշկական ստորաբաժանում տեղափոխվելու դեպքում դատապարտյալը ենթարկվում է զննման:

Եթե ՔԿՀ այցելած անձի կամ դատապարտյալի զննման արդյունքներով առկա է ողջամիտ կասկած, որ անձի մոտ առկա է արգելված իր կամ առարկա կամ այնպիսի իր կամ առարկա, որը կարող է օգտագործվել փախուստ, ինքնավնասում, ինքնասպանություն, հանցանք կամ այլ իրավախախտում, անկարգություն կատարելու համար կամ խախտում է պատժի կատարման կարգը, ապա անձը կարող է ենթարկվել անձնական խուզարկության: Մերկացմամբ զուգորդվող անձնական խուզարկությունը կարող է իրականացնել միայն նույն սեռի աշխատակիցը: Խուզարկությունը պետք է անցկացվի այնպիսի պայմաններում, որոնք չեն նվաստացնում անձի

արժանապատվությունը:

Խուզարկության և զննության, խուզարկության արդյունքով վերցված իրերի և առարկաների պահման ու տնօրինման կարգը և պայմանները սահմանվում են ՔԿՀ-ների ներքին կանոնակարգով:

Կալանավորված անձանց և դատապարտյալների համար արգելված իրերն ու առարկաները հաստատվել են ՔԿՀ-ների ներքին կանոնակարգով և ներկայացված են կից հավելվածում (էջ 29):

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

ՔԿՀ-ներում դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում է Քրեակատարողական ծառայությունից անկախ գործող մասնագիտացված կազմակերպությունը՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ՊՈԱԿ), որը բժշկական օգնությունը և սպասարկումը մատուցում է այն բժշկական օգնության և սպասարկման տեսակների շրջանակներում, որոնք իրականացնելու համար մասնագիտացված կազմակերպությունն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզիա: Բժշկական օգնության և սպասարկման այն տեսակները, որոնց համար ՊՈԱԿ-ը չի ստացել համապատասխան

լիցենզիա, տրամադրում են օրենքով սահմանված կարգով լիցենզավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական մարմինների բուժական հիմնարկները, այսինքն բժշկական այլ կազմակերպությունների կողմից:

Արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում են ՊՈԱԿ-ի՝ ՔԿՀ-ներում տեղակայված՝ համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական ստորաբաժանումները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ լիցենզավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական մարմինների բուժական հիմնարկները:

ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում դատապարտյալներին բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը մասնագիտացված կազմակերպությունն ապահովում է ցանկացած պահի՝ 24 ժամ և 7 օր ռեժիմով: Աշխատանքային ժամերին բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում է մասնագիտացված կազմակերպության ավագ և միջին բժշկական անձնակազմի, իսկ ոչ աշխատանքային ժամերին և օրերին՝ հերթապահություն իրականացնող միջին բժշկական անձնակազմի կողմից: Անհրաժեշտության դեպքում բժշկական օգնություն և սպասարկում տրամադրում են շտապօգնության բրիգադները:

ՔԿՀ-ի բժշկական ստորաբաժանումում դատապարտյալը պահվում է առանձնացված հատվածում, կացարանում կամ խցում՝ հնարավորինս ապահովելու կոնկրետ անվտանգային գոտու տեսակի պայմանները, որտեղ տեղաբաշխվել է դատապարտյալը պատիժը կրելու համար:

ՀՀ ՔԿՕ-ի 94-րդ հոդվածի համաձայն՝ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթուղթը կազմվում է, եթե՝

1) առկա է դատապարտյալի գրավոր կամ բանավոր հայտարարությունը՝ մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման հետևանք լինելու վերաբերյալ.
2) բուժաշխատողը հայտնաբերում է, այդ թվում՝ անցկացրած բժշկական զննության ընթացքում, որ դատապարտյալի մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը կարող է լինել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման հետևանք:

Ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման յուրաքանչյուր դեպքում բուժաշխատողը պարտավոր է՝

1) իրականացնել պատշաճ բժշկական զննություն և լրացնել արձանագրության ձևաթուղթը.
2) արձանագրության ձևաթուղթն ուղարկել իրավասու քննչական մարմին.
3) դատապարտյալին տեղեկացնել իր միջոցների հաշվին մասնագիտական երկրորդ կամ իր նախընտրած թվով այլ կարծիք ստանալու իր իրավունքի մասին:

Հիմքերի առկայության դեպքում՝ ՔԿՀ-ի պետը կազմակերպում է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկված դատապարտյալի պաշտպանությունը:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

ՀՀ ՔԿՕ-ի 121-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալը, ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով իրավունք ունի բողոքարկելու պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ ընդունած որոշումը՝ վերադասության կարգով կամ համապատասխանաբար պատժի կրման վայրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան կամ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ ըստ պատժի կրման վայրի:[9]

Այսինքն, բողոքարկվում է պաշտոնատա անձի՝

1) **գործողությունը,**
2) **անգործությունը,**
3) ընդունած **որոշումը:**

Պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բողոք կարող է ներկայացվել՝

[9] Համանման ընթացակարգով է իրականացվում կալանավորված անձանց կողմից բողոքարկման ընթացքը:

1) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի պետին.
2) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին կամ
3) դատարան:

Եթե պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ ընդունած որոշումը բողոքարկվել են պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի պետին և այդ հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին միաժամանակ, ապա բողոքը ենթակա է քննության պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի **վերադաս մարմնի կողմից**, որի դեպքում պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի պետի նախաձեռնած վարույթը կարճվում է:

Եթե պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ ընդունած որոշումը բողոքարկվել են դատարան և պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին միաժամանակ, ապա բողոքը ենթակա է **քննության դատական կարգով**, որի դեպքում պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմնի նախաձեռնած վարույթը կարճվում է:

Եթե պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ ընդունած որոշումը բողոքարկվել են վերադասության կարգով, և դատապարտյալի պահանջը չի բավարարվել, ապա դա արգելք չէ պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ ընդունած **որոշումը դատական կարգով բողոքարկելու համար**:

Ներկայացված բողոքը չի կասեցնում համապատասխան որոշումն ի կատար ածելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրա ի կատար ածումը կարող է առարկայազրկել բողոքի քննությունը:

Բողոքը կարող է ներկայացվել այն պահից հետո՝ 2 ամսվա ընթացքում, երբ բողոք բերող անձն ***իմացել էր կամ կարող էր իմանալ*** պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ

ընդունած որոշման մասին, սակայն ոչ ուշ, քան վիճարկվող ակտի կայացումից 1 տարի հետո, եթե կոնկրետ բողոքի համար օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

Բողոք բերողի միջնորդությամբ բողոքարկման ժամկետը կարող է վերականգնվել հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում: Բողոքարկման ժամկետը բաց թողնելը հարգելի է համարվում, և լուծվում է վարույթ նախաձեռնելու հարցը, եթե բողոք բերող անձը բողոքարկման ժամկետը բաց է թողել իր կամքից անկախ պատճառներով: Բողոքարկման ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելը հիմնավորում է բողոք բերող անձը:

Բողոքարկման ժամկետն առանց հարգելի պատճառի բաց թողնելու դեպքում դատապարտյալի բողոքը թողնվում է ***առանց քննության***:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄ

Խոշտանգումը հանցագործություն է և նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով: Յուրաքանչյուր դատապարտյալ կամ կալանավորված անձ պետք է պաշտպանված լինի խոշտանգումից և խոշտանգման արգելքը բացարձակ է: Խոշտանգման արգելքը սահմանված է Մարդու իրավունքների 1948թ.-ի համընդհանուր

հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների 1966թ.-ի միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների 1950թ.-ի Եվրոպական կոնվենցիայում, Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններում, Իրավապահ մարմինների պաշտոնյա անձանց վարքագծի 1979թ.-ի կանոններում, Որևէ ձևով ձերբակալված կամ կալանավորված անձանց պաշտպանության 1988թ.-ի սկզբունքների ժողովածուում և միջազգային այլ ակտերում:

Այս հանցագործությունը դրսևորվում է որևէ անձին դիտավորությամբ **ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելով**: Հանցանքն ավարտված է համարվում անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու պահից: Թեև նշված երկու գործողությունները հոդվածում բաժանված են «կամ» շաղկապով, գործնականում, չի բացառվում դրանց միաժամանակյա առկայությունը, քանի որ ցավը և տառապանքը փոխկապակցված զգացողություններ են:

Պատճառվող ֆիզիկական ցավի ուժգնությունը, ինչպես նաև դրա տևականությունը կարող են անձի մոտ առաջացնել նաև հոգեկան տառապանք: Ֆիզիկական ցավի ու հոգեկան տառապանքի աստիճանն ու բնույթը որոշելը չափազանց կարևոր է, քանի որ վերը նշված կոնվենցիաների իմաստով, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների համաձայն՝ միայն ցավի կամ տառապանքի պատճառումը դեռ բավարար չէ խոշտանգման մասին խոսելու համար, քանի որ խոշտանգման համար կարևոր է պատճառված տառապանքի ծանրության աստիճանը. խոշտանգումը վատ վերաբերմունքի խորապես գիտակցված և ամենածանր դրսևորումն է, ուստի, այն դեպքերում, երբ վատ վերաբերմունքն իր դաժանությամբ և ինտենսիվությամբ չի եղել այնպի-

սին, որ պատճառի ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք, կարող է խոսք գնալ ոչ թե խոշտանգման, այլ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի մասին: Թերևս, այս հանգամանքով է պայմանավորված քննարկվող հոդվածում «ուժեղ» բառի կիրառումը, որը թեև գործնականում դժվարացնում է խոշտանգման դեպքերի քննությունը՝ պայմանավորված հասկացության գնահատողական լինելով: Սակայն այդ եզրույթը կողմնորոշիչ նշանակություն ունի՝ խոշտանգումն այլ արարքներից տարբերակելու հարցում:

Տառապանքը հոգեբանության մեջ բացատրվում է որպես մարդու բացասական ապրումներից առաջացող հուզական վիճակն արտահայտող հոգեվիճակ, որն ի հայտ է գալիս՝ հոգեկան ներգործության ազդեցությամբ և խորապես ազդում է անձի առողջական վիճակի, տրամադրության և այլ արժեքների վրա: Տառապանքի ծանրության կամ խորության առումով վճռորոշ կարող են լինել օբյեկտիվ տարրերը, մասնավորապես՝ վերաբերմունքի տևողությունը և դրա պատճառած ֆիզիկական և հոգեկան հետևանքները: Այլ դեպքերում դա կարող է կախված լինել տուժողի սեռից, տարիքից, առողջական վիճակից կամ այլ գործոններից, որոնք ազդում են տուժողի սուբյեկտիվ ընկալման վրա:

Ֆիզիկական ցավի և տառապանքի պատճառման մեխանիզմները կարող են տարբեր լինել. էլեկտրահարումը, խեղդելը, այրվածքներ պատճառելը, առողջությանը վնաս պատճառելը, անձին ուժասպառ անելը, որը կարող է արտահայտվել օրինակ՝ սննդից, ջրից կամ քնից զրկելով և այլն:

Խոշտանգումը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցագործության պարտադիր հատկանիշ է նաև նպատակը: Որպես խոշտանգման պարտադիր նպատակ հանդես է գալիս՝

- ✔ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալը,

- այն արարքի համար պատժելը, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է,
- այդ կամ երրորդ անձին վախեցնելը,
- այդ կամ երրորդ անձին որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելը:

Հանցագործությունը կարող է կատարել ինչպես պաշտոնատար անձը, այնպես էլ՝ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ գործող ցանկացած այլ անձը: Օրինակ, պաշտոնատար անձն իր աշխատասենյակում երկու կալանավորված անձանցից մեկին առաջարկվում է մյուսից կորզել խոստովանական ցուցմունք՝ կիրառելով այդ անձի նկատմամբ ուժեղ ֆիզիկական ցավ ու հոգեկան տառապանք:

Խոշտանգումը պատժվում է միայն ազատազրկմամբ և կախված ծանրության աստիճանից պատիժը կարող է լինել՝ 4-8 տարի, 7-12 տարի[10] կամ 8-15 տարի ժամկետով:

---

[10] 1) կատարվել է անձի, նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,
2) կատարվել է հղի կնոջ նկատմամբ,
3) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,
4) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,
5) կատարվել է անչափահասի նկատմամբ,
6) կատարվել է առանձին դաժանությամբ,
7) կատարվել է մի խումբ անձանց կողմից կամ
8) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

ՀԱՎԵԼՎԱԾ

Կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելվում է իրենց մոտ ունենալ կամ հանձնուքներով և ծանրոցներով ստանալ կամ ձեռք բերել, ինչպես նաև արգելվում է կալանավորված անձանց և դատապարտյալներին վաճառել՝

1) քաղաքացիական շրջանառությունից հանված կամ քաղաքացիական շրջանառությունը սահմանափակված առարկաներ, նյութեր և արտադրատեսակներ.
2) ցանկացած տեսակի հրազեն, նետողական, օդաճնշիչ, գազային և սառը զենք, դրանց փամփուշտներ.
3) ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց (բջջային հեռախոս, բջջային հեռախոսի լիցքավորման սարք, բաժանորդային քարտ և այլ մասեր ու պարագաներ, ռացիա և այլն)՝ բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.
4) դրամ, արժեթղթեր, թանկարժեք կամ թանկարժեք նյութերից պատրաստված իրեր, բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.
5) ապակյա կամ մետաղյա տարաներ, ինչպես նաև այդ տարաներով հեղուկներ կամ սննդամթերք, բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.
6) օպտիկական սարքեր (բացառությամբ ակնոցների), բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.
7) ցանկացած տեսակի փաստաթուղթ (բացառությամբ իր մասնակցությամբ քրեական գործին վերաբերող կամ իրենց իրավունքներին և օրինական շահերին առնչվող փաստաթղթերի և գրառումների, եթե դրանք չեն պարունակում պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք), բացառությամբ

ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.

8) կացին, մուրճ և այլ գործիքներ՝ բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող, ինչպես նաև աշխատանքներում ներգրավված դատապարտյալների.

9) դանակ, ածելու շեղբ կամ կտրող-ծակող այլ առարկաներ, որոնք իրենց կառուցվածքով նման են սառը զենքի՝ բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.

10) ֆոտոխցիկ, տեսախցիկ, համակարգիչ, վիդեո, աուդիո ձայնագրող սարքեր և նկարահանող այլ տեխնիկա՝ բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.

11) տոպոգրաֆիկ քարտեզներ, կողմնացույցներ՝ բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.

12) երաժշտական գործիքներ՝ բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.

13) խմորիչ, տնային պայմաններում պատրաստված պահածոներ՝ բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.

14) էլեկտրակենցաղային իրեր (բացառությամբ էլեկտրական ածելիների), բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.

15) անկողնային ծրարներ, բացառությամբ ՔԿՀ-ի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների.

16) ցանկացած տեսակի դեղ, եթե առկա չէ բժշկի գրավոր ցուցումը.

17) ներքնակ, բարձ, ծածկոց՝ բացառությամբ ՔԿՀ-ի կողմից պետական միջոցների հաշվին տրամադր-

վածների.
18) ալկոհոլային խմիչքներ, սպիրտ պարունակող ցանկացած հեղուկներ.
19) ցանկացած տեսակի այլ առարկա, իր կամ սննդամթերք, բացառությամբ հետևյալ առարկաների, իրերի կամ սննդամթերքի՝
ա. ծխախոտ, լուցկի, կրակայրիչ,
բ. ՔԿՀ-ի կողմից տրամադրված կամ դրանից գունային կամ այլ հատկանիշներով չտարբերվող նույն տեսակի հագուստ, գլխարկ, կոշիկ, սավան, բարձի երես, երեսսրբիչ և հիգիենիկ սրբիչ, իսկ կալանավորված անձանց և ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների համար նաև՝ քաղաքացիական հագուստ,
գ. ներքնազգեստ, թաշկինակ, գոտի, գուլպաներ, վզնոց, զուգագուլպաներ, ձեռնոցներ, թաթմաններ, սենյակային հողաթափեր, սպորտային կոշիկ, սպորտային համազգեստ, թելեր, սրբիչ,
դ. հիգիենայի պարագաներ (տնտեսական և ձեռքի օճառ, ատամի խոզանակ, ատամի փոշի կամ մածուկ, քսուքներ, շամպուն, սանր), եղունգներ կտրելու աքցան,
ե. կանանց համար՝ գլխաշոր, ռեյտուզ, կրծկալ, մառլյա, բամբակ, հիգիենիկ փաթեթ, ծամկալներ, վազելին և կոսմետիկ պարագաներ,
զ. հայելի, էլեկտրական կամ միանգամյա օգտագործման անվտանգ ածելի,
է. կոշիկի և հագուստի խոզանակներ, կոշիկի քսուք,
ը. պլաստմասսայից պատրաստված տուփեր՝ ակնոցների, օճառի և ատամի խոզանակների համար,
թ. սպասք՝ ալյումինե, պլաստմասսայե կամ էմալապատ,
ժ. սեղանի խաղեր՝ բացառությամբ խաղաթղթերի, զառի,
ժա. գրականություն, թերթեր և ամսագրեր՝ բացառությամբ պոռնոգրաֆիկ և էրոտիկ նյութերի, ինչպես

նաև դասագրքեր, տետրեր, փոստային ծրարներ, բացիկներ, դրոշմանիշեր, հասարակ մատիտներ, գրիչներ,

ժբ. լուսանկարներ, լուսանկարների ալբոմ, օրացույց,

ժգ. գործարանային արտադրության կենցաղային էլեկտրական ջեռուցիչներ (կենտրոնացված ջեռուցման համակարգի բացակայության դեպքում), էլեկտրական թեյնիկ, էլեկտրական սրճեփ,

ժդ. ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված խաչեր և պաշտամունքի այլ առարկաներ,

ժե. բժշկի թույլտվությամբ՝ հենակներ, ձեռնափայտեր, պրոթեզներ, անվասայլակներ և այլ աջակցող միջոցներ,

ժզ. առանց համացանցին միանալու, առանց տեսանկարահանելու կամ ձայնագրելու հնարավորության, ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված ձեռքի կամ գրպանի ժամացույց,

ժէ. հեռուստացույց (առանց համացանցին միանալու հնարավորության, որի անկյունաչափը չի կարող գերազանցել 92,5 սմ), ռադիոընդունիչ, մագնիտոֆոն (առանց ձայնագրման հնարավորության), սառնարան (125 x 66 x 60 սմ չափսերից ոչ մեծ կամ տեխնիկական անձնագրի համաձայն՝ 280 լիտր ընդհանուր ծավալը չգերազանցող),

ժը. թզբեհ՝ բացառությամբ քրեական ենթամշակույթի տարրերով, սուր կամ ծակող ծայրերով կամ հատվածներով,

ժթ. գործելու շյուղեր, ասեղնագործության պարագաներ, եթե կալանավորված անձը կամ դատապարտյալը զբաղվում է շյուղագործությամբ կամ ասեղնագործությամբ,

ի. իրենց մոտ երեխա ունեցող անձանց համար՝ մանկական խաղալիքներ, սայլակ,

իա. հանքային ջուր, հյութեր, խմելու ջուր՝ գործարանային արտադրության և պլաստմասսայե տարաներով,

իբ. բանջարեղեն, մրգեր,

իգ. շաքարավազ, կոնֆետ, շոկոլադե սալիկներ, կաթնամթերք (կարագ, պանիր, թթվասեր, մածուն, կաթնաշոռ), երշիկեղեն, աղ, սուրճ, թեյ, կակաո, մաստակ,

իդ. սննդամթերք, որը չի պահանջում ջերմային մշակում, բացառությամբ դատապարտյալի հետ երկարատև տեսակցության ժամանակ որպես հանձնուք կամ ծանրոց ընդունված ջերմային մշակում պահանջող սննդամթերքի, որը կարող է պատրաստվել և օգտագործվել միայն երկարատև տեսակցության սենյակում և այդ տեսակցության ընթացքում

Հարգելի ընթերցող

Հուսով ենք՝ այս ուղեցույցը կիրառելի է ու օգտակար: Իսկ դրանում համոզվելու միակ եղանակը գործնականում ստացած գիտելիքների օգտագործելն է: Ուրեմն՝ իրավունքների ոտնահարման դեպքում անհապաղ ահազանգեք «Հանուն Ազատության» ԻՀԿ-ի թեժ գիծ: Ստացված բոլոր ահազանգերը կուղղվեն պատկան մարմիններին ու կստանան լուծումներ:

Միասին փոխենք անազատության մեջ գտնվողների կենսակերպը, նպաստենք բռնության ու խոշտանգման, խտրականության դեպքերի նվազեցմանը:

Թեժ գիծ- 093 90 46 10
Կայք- https://hanunazatutyan.am/hy
Հասցե– ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, 3301, Թումանյան 3/29

«Այս ծրագիրն իրականացվում է Մոլդովայի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության Դեսպանության և ԼԳԲՏ+ հավասարության Արևելյան Եվրոպայի կոալիցիայի աջակցությամբ՝ «Արևելյան Եվրոպայի ԼԳԲՏ+ շարժման կայունության կառուցում» ծրագրի շրջանակներում»: